



78. ԽՈՐԹ ԱՆՃԿԱ ՆԱՂԸԼԸ

Ասում են՝ խորթ ախճկա օրը սև ա ինքն, բախտը՝ կարմիր: Դեռ խոսկ ա, ըտրա մհար էլ ծեղ պատմիլ վեմ մին դհչանգ նաղըլ խորթ ախճկա, ուրն խորթ մոր ու խորթ քրվոր մասի:

Ինքն ա, ինքն չի, մին կեղացի ա ինքն, ըստա կնիկը մեռնում ա, մին կուճի ախճիկ թողըմ մարթի ումոդին: Դե տըղամարթն առանցի կընգա եփ ա յուլա քինացել, որ էտ մարթը յուլա քինեք, էն էլ կուճի ախճկա նհետ:

Մին օր էլ վեք ա կենքմ քինքմ հըրեան կեղը, մին ջաղու կնիկ պեքըմ, մին ախճիկ էլ վրատիր: Էս կնիկը հենց տուն ա մընքմ, թն չէ, ըսկարմ ա ուրն խորթ ախճըկանը ատիլը: Առաչ տանիցը խըռկըմ ա կոմը թն փինթի յա, եխտոտ ա, փլան ա, փըստան ա, դե որ մինը մինին ուզի ոչ, ինչ ասես որ կարա ոչ ասի, լուզվի տակին հու ոսկուռ չըկա:

Ամման օր մին մհանի յա ման կնիխ, որ ախճկա կոթը խաչի:

Օրերից մին օր էլ, եփ հերը չոլըմն ա ինքն, էս կնիկը փլավ ա եփըմ, վրեն եղ ա լըցնքմ, կճոճը կապըմ մին թնմոդ յալլոխի մեչ, տալիս խորթ ախճկա ծեռը, թն.—Տա՛ր արտը, տո՛ւր հորըտ, համա դե որ մին կաթ եղ ես կաթըցրել յալլոխի վրեն, վիզըտ տակիցը պոկիլը վեմ:

Հեխճ եթիմը իչքան մըղայիթ ա ինքն, իչքան հանդանդ ա քիներմ, էլհն աննալ չի կնիխ, յալլոխը եղոտ ա ինքն, լնքն յա ընգնքմ:

Տուն կնիխ, ճընապին ուզըմ ա լըվանն, համա լնքեքը քինքմ չեն, նըստըմ ա, աղի-աղի լնց ա ինքն:

Բոլըղան շտեղան-շտեղ մին օց ա տոն կնիխ հու ասըմ.—Նախ-չո՛ւն ախճիկ, լնց մի՛ ինիլ. քու ցավին ես դնքման կանեմ, միննակ տոն վե՛ կաց, իզ մհար մին ծաղկի փըսակ կոճի, էքուց իմ քրվոր հըրսանիքն ա:

Ախճիկն էն սըհաթին ծաղիկ ա քաղըմ, փըսակ կոճըմ, տալիս օցին, իսկը օցը ծունիցը սիպտանկ յալլոխը տալիս ա ախճկանը:

Մին էլ տենում ա՝ մին ուրիշ օց ա կանխա դրբան ինքը հուսարմ.—Մարա՛լ ախճիկ, մին նըհենց փըսակ էլ իզ մհար կո՞ռծի՛, էլի, իշ կինի, ախըը էքուց իմ հըրսանիքն ա:

Ախճիկը դանտին քաղըմ ա ջուռա-ջուռա չիմիցը նախշուն ծաղիկնին հու մին փըսակ կո՞ռծըմ, տալիս օցին:

Օցը օրթնըմ ա ախճկանը. «Իրեսկըհատըտ արեի մնան լիս տա, եփ լաց ինես, աչկերիցըտ ջուհար թափի, շտեղ էլ քինալի ինես, ոչ մին փորցանքի ոնստ չըկան»:

Եթիմը տուն ա կանխա, թամմո՞ղ յայլոխը տալիս խորթ մորը նհետն էլ ջուհար տանած ուրա արտասուներիցը մին պո՞ւր:

Էքսի օրը մերը ուրա հալալ ախճրկանն ա դըրկըմ արտը, հոր մհար հաց տանիլի: Համա ճընապին չիմ եղը թափվըմ ա յայլոխին:

—Վա՛յ, ախճի՛կըս, էս ի՞նչ ես արել, մերըտ անգաճնիտ ծըբիլու յա:

—Ծըբիլ չի, ես էլ ճընապին քվորըս մնան կըլըվանամ,—ասըմ ա ախճիկը:

—Քիրըտ յայլոխը արտասունքով ա լըվանցել,—ասըմ ա հերը:

Էս պանը, որ ախճիկը լաըմ ա, ճընապին ըսկսըմ ա սուտ լաց ինիլը, ուզըմ ա արտասունքը վհաքի կըճո՞ւճի մեչ, որ յայլոխը լըվանն, հենց էտ վանդըմը մին օց ա մոտ կանխա հու ասըմ ա.—Նախշո՛ւն ախճիկ, լաց մի՛ ինիլ, քու դարդին դարման անիլը հեշտ ա, տո՞ւ վե՛ կաց, մին դանչանգ ծախկափըսակ կո՞ռծի՛ իզ մհար, էքուց քըվորըս հըրսանիքն ա:

Հալալ ախճիկը, որ մոր խասյաթին էր, մին քար ա վեր ունըմ, թան տա օցի կլխովը, օցը փախնըմ ա, մըննըմ պո՞ւր:

Ջըռուալով ուզըմ ա ճընապա ընգնի, մին օց էլ ա տո՞ւ կանխա առաչը:

—Ա՛յ ջիգարով ախճիկ,—ասըմ ա,—էքուց իմ հըրսանիքն ա, խընթըրմ եմ մին փըսակ կո՞ռծես էս ծաղիկներիցը:

Ըստան էլ ա ուզըմ քարով սըպանի, էս օցն էլ ա փախնըմ:

—Մենք թան օց ենք, տո՞ւ մեզանա բեթար օց ես, ա՛յ ախճի,—ասըմ են օցերը,—թո յայլոխտ լաքեքը թըմզվի ոչ, տո՞ւ էլ տաննանս կոեթի մնան սև, իշքան էլ լաց ինես, աչկերիցըտ որթնունք թափի:

Ախճիկը տուն ա կանխա թան չէ, մերը մնըմ ա զարհո՞ւրած. ախճը-կա իրեսկըհատը քոմո՞ւրից էլ սև ա ինըմ, յայլոխը՝ իրեսիցը բեթար, աչկերիցն էլ որթնունք ա թափվըմ:

Էս պանից եղը, ջաղուն օր ու գյանք չի տալիս խորթ ախճրկա-նը, որը քանիչ քինըմ ա, տաննըմ ա մին պատկեր:

Օրերից մին օր էլ, եփ հերը էլհա տանը չի ինըմ, խորթ մերը եթիմին դըրկըմ ա քուր ճախ վըհաքիլի: Հեխճը քուրմը մըճըճվըմ ա,

ճընապեն կորցնում, գիղըմ չի, թն Հուր քինն: Սըհենց շատ ա տե-
սը-տեն ընգնում, մինչու մթինն ընգնում ա:

Մին վախտ տենում ա ծառերի դաթիցը մին իչեղ ա իրեըմ:

Քինըմ ա դըբն իչեղը, տենում ա մին կուճի տուն ա, տանն էլ մին
նախոշ բիձն պըրանված:

—Լնվ ես արել, որ եկել ես, մարա՛լ ախճիկ, Աստոծ ա քե դըր-
կել իղ քոմնգ: ՋնՀմն՝թ քաշի, օջա՛ղը կըպցրի, ճն՛չ եփի, սոված
մեռնում եմ: Համա դարմանաս ոչ, որ քոլըմն ապըրմ եմ, Համա փեղ
էլ չունեմ, ճո՛ւր էլ: Էտ ոչինչ, տանը քամակին ոսկուռնի կա թա-
փած, ընդանք պե վառի՛, տունն առաչին էլ մին գուշ կա ժանգոտ
ճըրով լիքը, էտ ճըրիցն էլ վե կալ պե՛, մին քիչ չորվա եփի՛:

Լսըմ ա եթիմը, սիրտը ցավըմ ա, քինըմ ա փեղ ա պերըմ քոլիցը,
ախպո՛ւրիցը կըժով ճո՛ւր ա պերըմ, մին Համով չորվա եփըմ:

Եփ դազանը տինըմ ա թախտին, բիձեն ասըմ ա.—Ուժ չունեմ
թախտին մոտկանամ, թա կարըմ ես, ոններիցըս փըռնի՛, ինձ քա՛չ
տու թախտի կուշտը:

Ախճիկն էլ թախտն ա քաշ տալիս բիձի կուշտը:

Եփ երկուսով ուտըմ, քըշտանըմ են բիձեն օրթնըմ ա ախճկանը
եղո, թն.—Տո՛ւ ինձ մահից փըրգեցիր, քինա՛ էյվանը, ընդեղ իրեք
ղութի կա, մեծ զուժին, որի վըրեն կատու կինի նըստած, վե կալ պե՛ր:

Ախճիկը քինըմ ա էյվանը, իրեք զուժիներիցը ամմանակուճիրը
վեր ունըմ, կնլիս բիձի կուշտը:

Բիձեն ասըմ ա.—Հալա՛լ ինի կերածըտ կաթը, ախճի՛կըս, աչ-
կըտ միշտ կո՛ւշտ ինի, սիրտըտ՝ պարի, գիղըմ ի, որ տո՛ւ էտ կուճի
ղուժին վեր կունես, էտ քու հըրսընքի քթեթն ա, թն ես էլ սաղ
մընացի, հըրսընքիտ կըկնամ:

Ախճիկը եփ կնլիս ա տուն, մին չըլնկ չոփի հետ զուժին էլ ա
պերըմ, մեչը լիքը անկին քարեր ու ջավահիր, խորթ մոր աչկերը
նախանձիցը պեծին-պեծին են անըմ, եղո, որ գիղըմ ա, թն ոնց
ա էտ զուժին ընգել խորթ ախճկա ծեռը, էքսի օրը ուրն Հալալ
ախճըկանն ա դըրկըմ քոլը՝ ճախի:

Էս Հալալ ախճիկը քինըմ ա քոլը, առանցի ճախ վըհաքիլի ուրն
քեփին ման ա կնլիս, մինչու ճարըմ ա հնմին կուճի տունը, շտեղ
նախոշ բիձեն պըրանված ա ինըմ:

Բիձեն, որ էտ սև կոեթին տենում ա, տընքալով ասըմ ա.—Ախ-
ճի՛ ջան, սոված մեռնում եմ, մին օջաղը վառի՛, ճն՛չ եփի:

—Ճն՛չ եփե՞մ, դե վեր կաց փեղը պե՛ր, ճո՛ւրը պե՛ր, այնոյին
պեր, ես էլ եփեմ:

—Սիրո՛ւն ախճիկ,—ասըմ ա բիձեն,—դե որ պերող ինի, հեն ա
ինքս էլ կեփի, էլի: Ցավըս էն ա, որ փեղ չըկա, Համա տան քամա-

կին ոսկուռնի կա թափած, է՛ն պեր, կըպչա՛ն արա, ձո՛ւր էլ կա ոչ, համա ոչինչ, տուան կըշտին մին գուշ կա, ժանգոտ ճըրով լիքը, է՛ն ճըրիցը պե՛ր, այնոյինն էլ պուճախըմն ա, մին չորվա եփի՛:

Ախճիկը ընենց ա անըմ, ոնց որ բիճեն ասըմ ա: Ոսկուռի հու ժանգոտ ճըրի հոտիցը սիրտը թո՛ւլանըմ ա, համա մին կերպ չորվեն եփըմ ա, տինըմ թախտին:

—Դե եկ զըխտվի՛,—ասըմ ա բիճին:

—Ուժ չունեմ տեղիցըս պըցրանալի, կարըմ ես՝ ոններիցըս փըռնի՛, քա՛շ տու թախտի կոխկը,—ասըմ ա բիճեն:

Ախճիկը ըտենց էլ անըմ ա:

Բիճեն ասըմ ա.—էն պանի մհար, որ ինչ ասեցի, նըհենց էլ արար, ես քեզ փեշքեշ եմ տալու: Քինն՝ էյվանը, ընդեղ իրեք ղուլթի կա, մինը կըվերնես քե, լա՛վ կանես, որ ամենամեծը վերնես, որի վրեն կատու կինի նըստած:

Ախճիկը վազ ա տալիս էյվանը, տենըմ ա, ղորթ որ իրեք նախ-չուն ղուլթի՝ մինը-մինիցը մեծ, համա չիմիցը մեծ ղուլթու վըրեն մին կատու յա նըստած: Կատվին քչըմ ա մին ղուլ, ղուլթին չըլակըմ, կալիս:

Բիճեն, որ էտ պանը տենըմ ա, քթի տակին ծիծաղըմ ա, ասըմ.—Տա՛ր, հալա՛լըտ ինի, քու հըրսընքի քթեթն ա, ըստանա եղո էլ ով ինչ ասի, նըհենց էլ կանես, լավ ինի, թա՛ փիս, մին ա:

Ախճիկը, որ ղուլթին չըլակին մընըմ ա տուն, մերն անըմ հալիս տեղիցը թըռնըմ ա, ուզըմ ա տենա, թա՛ ինչ ա պերել ուրա՛ ախճիկը:

Ղուլթին հենց պաց են անըմ թա՛ չէ, ալավը փըռնըմ ա տունը, չիմ իլածը էրըմ ա, փըթոթըմ, ուրանք էլ մին կերպ են տո՛ւս պըր-ծընըմ, սըթըմիչ ինըմ կո՛մըմը, խորթ ախճկա կըշտին:

Սիրտը կըսկըծալին, խորթ մերը թա՛զա՛ հընարքի յա ման կալիս, որ խորթ ախճըկա կո՛խը ուտի: Ղանտինն կըրակը հընգ-ցընըմ ա, եղո խորթ ախճըկանը ղըրկըմ մեծ կետի է՛ն ղուլին ապրող Դանըմիչիցը կըրակ պերիլի:

Ոտըմ մերը գիղըմ ա, որ ով քինըմ ա էդ Դանըմիչի կուշտը էլ ետ չի տանըմ, թա՛ ինչ են ինըմ քինացողին ոչ մինին այան չի ինըմ:

Դե հեղճ եթմըմ ի՞նչ կարար անիլ, վեր ա կենըմ ընգըմ ճընա-պա:

Հըսնըմ ա կետի ղրաղը, տենըմ ա հեսա մին կով ա ըրածըմ, հա-մա կուռծը կաթի շատուլթունիցն ուռել ա:

Կովը ախճկանն ասըմ ա.—Մարա՛լ ախճիկ, եկածըտ ճընապեն օրթնվի՛, թա՛ կարաս իդ կթի՛:

Ախճիկը կթըմ ա, կովի կուռծը թիթեըցնըմ հու կետը աս կենըմ:

Կետի էն դոլին ռանստ ա կալիս մին ռիսարի, որի պուռթը տափովը քաշ կալիս ա ինրմ:

Ոխնարը ախճրկանը խընթրըմ ա.—Սիրո՛ւն ախճիկ, ախըր խաշվըմ եմ, թե՛ն կարաս, իդ խուզի՛:

Ախճիկը ռիսարին էլ ա խուզըմ, էլհամ քինըմ առաչ: Բուրդան տենըմ ա՝ մին դուշ դափանգի մեչ ա, էս դուշը խընթրըմ ա, որ դափանգի տոռը պանց անի: Պանց ա անըմ: Ղուշը ծըլվ ըլալով, թըռվըռալով մին քանի ջըղըղ պտուտ ա կալիս ախճրկա կըլխովը հու թը՛ռո, շտեղ աշկը կըտըրըմ ա:

Մին խելի տեղ էլ որ քինըմ ա, տեսնըմ ա՝ հեսա ուրուր կըշտի մին քուռակ ու մին կել ա կապած, կելի առաչին խոտ ա, քուռակի առաչին՝ միս: Սուսուփուս խոտը վեր ա ունըմ, տինըմ քուռակի առաչին, միսը՝ կելի:

Ախճիկը ըստանցանա էլ, որ աս ա կենըմ, մին էլ առաչն ա տոռս կալիս Դարվուշը, հըրցընըմ.—Ա՛յ ախճի, դուշն ուրա թետվը, օցն ուրա օխտը պորտովը էս դուրեռովը աս չի կենըմ, տու էտ ի՞նչ ջանավարի սիրտ ես կերել, որ ռիսկ ես արել: Ինչի՞ մհար ես եկել, հո՞ւր ես քինըմ:

—Նորթ մերըս դըրկե ա Դարվուշ պապիկիցը կըրակ տանեմ, օջաղը վառենք,—ասըմ ա ախճիկը:

—Որ ըտենց ա, ա՛ռ էս չըվին, համ ածա՛, համ պա՛ր եկ, ես քինամ, կըրակը պերեմ:

Հենց Դարվուշը քինըմ ա, ախճկա ազադած դուշը վեր ա կալիս ուսին հու ասըմ.—Շըվին տե՛ն քցի, ոչ էլ պար կըկաս, հենց որ չըվին ածես, ծառ ես տաննալիս: Լա՛ղ արա, վա՛ղ տու Դարվուշի էյվանը, ընդեղ թորեն կա, թոռնի մեչ էլ կըրակ: Պուճախըմը էրկու քանն կա, մինը՝ պղնձի, մինը՝ հողի, հողի քանսի մեչ կըրակ լըցրի հու փախի՛, թաշնա չէ Դարվուշը, որ քե տենա, քըցիլվա թորենը, խըրովի:

Եթիմը իշքան ուժ ուներ, վազ ա տամ, կըրակը լըցնըմ հողի քանսի մեչ հու դըրա տուն:

Տու մի ասիլ, Դարվուշը ջին ա ինըմ: Հենց որ ետ ա տանըմ, տենըմ ախճկա իզն ու թոզն էլ ա իրեըմ չի, մին ծառ ա քեքահան անըմ, ծի չինըմ, նինըմ հու քըըմ:

Հըսնըմ ա կելին հու քուռակին, հըրցնըմ ա.—Ըստեղով մին ախճիկ չի աս կացե՞լ:

—Բա ո՛նց, կինի մին սըհաթ, որ քինաց Դարվուշի տան դուր:

Դարվուշը ետ ա տանըմ, տունը աղըմ-մաղըմ ա, համա ախճիկը կա ոչ հու կա ոչ: էս անքամ էլ ցըխանվին ա նինըմ հու քըըմ:

Հըսնըմ ա ռիսարին էլհա հըրցնըմ ա.—Ըստեղան մին ախճիկ չի աս կացե՞լ:

—Մին խելի վախտ կինի, որ քինաց դըրն Դարվիլի տունը:

Դարվիլը թագնդան ետ ա տառնըմ տուն, տակն ու վրն յա անըմ քոնջ ու պուճախը, համա ախճկանը ճարըմ չի: Էլ հնացըխավիլը նինըմ ա հու քչըմ: Էս անքամ էլ կովին ա հըրցըմ, թն մին ախճիկ ա աս կացել էս ղոլերովը, հու ինքը տեսել չի՞:

—Տեսել եմ, ոնց չեմ տեսել, բա էլ որ օրվա դարավուկ եմ, որ ամման ինչ տենամ ոչ: Հենց քիչ առաչ իմ կըշտովը աս կացավ, քինաց Դարվիլի տունը կըրակ պերիլի:

Դարվիլը էս անքամ էլ ա հերսոտած ետ տնոնըմ, համա ո'չ ճընապին ա ախճըկանը ճարըմ, ո'չ էլ տանը: Դե շտեղա՞ն ճարեր, յա ո՞նց ճարեր, եփ ախճիկը կըրակը հըսցըրել էր տուն, օջաղը կըպցըրել, ճաչ եփել, ուրն պաժինը կերել հու քընել:

Ըստան թողանք ստեղ, մենք խնքա՞րը տանք խորթ մորիցը:

Խորթ մերը տենըմ ա, որ էս անքամ էլ կարաց ոչ խորթ ախճըկա օքտիցը կալ, սաղ-սալամաթ եկավ քիչ էր, հետն էլ մին հողի աման ա պերել, որ մեչը ճուր ես լըցնըմ՝ տնոնըմ ա մեղը, կարի ես լըցնըմ՝ տնոնըմ ա չամիչ:

Ջաղուն միտկ ա անըմ, էքսի օրը էլ հնամ կըրակը հընգցընըմ ա, համա էս անքամը ուրն հալալ ախճկանն ա դըրկըմ Դարվիլի կուշտը կըրակի, թն ինչ ա, բալքի էն էլ բախտավորվի:

Խորթ մոր ախճիկը քինըմ ա, ոնստ ա կնլիս կովին: Կովը դա՛չանք ա անըմ, որ ուրան կթի, համա ախճիկը պանի տեղ չի տինըմ, քինըմ ա ուրա ճընապովը:

Ուճարին ա ոնստ կնլիս, համա ինքը՝ հո՛ւր, ոխճար խոզիլը՝ հո՛ւր, որ կարար, էն ա կըխոզեր, էլի, բաշարմազը քիթը վեր ա քա՛չըմ, քինըմ ուրն ճընապեն: Ղափնղի մեչի դըչին էլ չի պաց թողնըմ, էտ էլ հու հոննարի պան չէ՞ր, համա ինքը ուրն մոր ժառանգն էր՝ քիթը դիք հու անքարդավան:

Քինըմ ա առաչ, ոնստ ա կնլիս քուռակին հու կելին, ըստանք էլ են դաչանք-պաղատանք անըմ, որ ուրանց եմի տեղը փոխի, համա դե ո՞ւմ ես ասըմ: Դո՛ղըղիլ քինըմ ա, քինըմ, մին էլ տենըմ ա մին երգեն, սիպտակ մըրքավոր մարթ հեսա նըստած:

—Ա՛յ քավթառ, —ասըմ ա, —Դարվիլի տունը շտե՞ղ ա:

—Բա տո՛ւ ո՞վ ես, որ ուզըմ ես Դարվիլի տունը քինաս, յա ինչի՞:

—Կըրակ ա հարգավոր, եկել եմ, կըրակ տանեմ:

—Հա, կըրակ ես ուզըմ, լն՛վ կինի, քու ուզած Դարվիլը հենց ես եմ, որ կամ, տո՛ւ էս նըղարեն վե կալ, էս չո՛ւմանըմը ածա՛ հու պա՛ր եկ, ես քինամ կըրակը պերեմ:

Հենց քինում ա մին դուշ լիւզիւ առած ասում ա.—Թեգուզ տիւ
ռուզիաթ չես, սըրտըմըտ ջիգանը չըկա, մարթի թոխըմ չես, համա իմ
պարտկն ա քե ասեմ, թիւ ուզըմ ես կըրակ տանես, նըղարեն քցի՛,
վա՛ղ տու էյվանը, ընդեղ օջաղըմը կըրակ կա, կըչտին էլ՝ էրկու
աման, մինը՝ հողի, մինը՝ պղընձի, կըրակը լըցրի՛ հողի ամանը հու
փախի՛:

Ախճիկը քինում ա հողի ամանը թողըմ, կըրակը լըցնում պղըն-
ձի ամանը հու վազ տալիս: Թո ինքը վազ տա, մենք տենանք
Դարվիւշը իչ պանի յա: Դարվիւշը որ կամ ա, տենում՝ էս ախճիկն
էլ չըկա, հերսոտվըմ ա, թիւ մինը ծեռիցըս պըրծալ, էս մինին պըր-
ծում չի ինիլու: Նստըմ ա մին ճըղված գանբի, գանբեն թըռնում ա,
ըսկսըմ ախճկա ունդովը քինանլը:

Դարվիւշը հըսնում ա քուռակին հու կելին, հըրցընում ա.—Ըս-
տեղով մին սև կոեթ ախճիկ աս կացա՞վ:

—Հա բա՛, հենց քիչ առաչ փախալ, ծեռին էլ պղընձի աման
կար:

Հըսնում ա դըչին հըրցընում.—Ըստեղով մին ակոեվի պես սև
ախճիկ աս կացա՞վ:

—Հա՛, հենց քիչ առաչ քինանց:

Հըսնում ա ոխճարին հըրցընում.—Ըստեղան մին ախճիկ հու աս
չըկացա՞վ:

—Աս կացալ, ծեռին էլ կըրակով լիքը մին պղընձի աման կար:

Էս դարըմը ախճիկը ետ ա եչըմ, տենում ա հեսն Դարվիւշը
գանբին նըստած թող ու դուման անիլով, հըսնում ա: Ծեռի կըրա-
կամանն էլ թարսի մնան կեծացած ա ինըմ, ծեռները դանդըմ ա,
խանչըմ հու փթոթըմ, ըտրա մհար էլ ամանը կըրակովը չըպրտըմ
ա, ինքը փախնում:

Հենց որ Դարվիւշը էս տեսնում ա, ծիծանըմ ա, թիւ էլ ես անիլի
պան չունեմ, իզ տեղակ կըրակը ախճկա հախիցը կըկն:

Դիւզ որ, կըրակն ընգնում ա չոր խոտերի վրն հու պաժառ տա-
լիս: Դե կըրակն էլ սելավի մնան ա, ամման ինչ լիզ տալով դու յա
անըմ ախճկա քամակիցը: Ախճիկը հուր փախնում ա, ալավի ծեռիցը
պըրծնիլի ճար չի ինըմ, չիմ չիբերը մըլմլոտըմ ա, մագերը մինչու
տակոին խանձվըմ, լեչը փուչիկ-փուչիկ ա տանում, մըռմուռիցը
կարըմ չի, թիւ անդըմը անդըմի առաչին տինի:

Մին դոլայի քաչ կանով հըսնում ա մին ծառի, տակին թավիլ-
թավիլ անըմ հու հոքին տալիս:

Խորթ մերը շատ ա սպասըմ ուրն ախճկանը, համփերութունը
կտրվըմ ա, ինքն ա վեր կենում քինում եննիցը:

Հըսնում ա կովին, կովն աղաչանք ա անըմ, որ ուրան կթի, կնիկն

ասըմ ա՝ մնջնալ չունեմ, ես իմ ախճրկանն եմ ման կնիս, տեսել չե՞ս:

—Դե ըտենց մորիցը ընենց ախճիկ անջախ անշն կն, էլի, —ասըմ ա կովը, —տեսել եմ, ոնց չեմ տեսել, հեն է էն ծառի տակին:

Մերը, որ մոտկանըմ ա ծառին հու ախճկա էրված-խրրովված լեշը տենըմ ա, սիրտը ճաքըմ ա, տեղնուտեղն ա մնըմ:

Ջարմանալի միլնթ եք, բա խի՞ չեք հըրցնըմ, թն վերչն ինչ իլավ:

Վերչն էն իլավ, որ թաքավորի տղեն օրերից մին օր ոնստ ա կնիս մին լիսնյազիրես ախճկա, որ լվնսկ անիլիս ա ինըմ, մոտկանըմ ա մին փարչ ճուր ա ուզըմ:

Ախճիկը եփ ճուրը պերըմ ա հողի ամանովը, թաքավորի տղեն խմըմ ա, տենըմ ա՝ ճուր չի, շնրբնթ ա, ասըմ ա. —Ա՛յ մարալ ախճիկ, ես ճուր ուզեցի, խի՞ ես շնրբնթ տալիս:

—Ես ճուր եմ տվել, վըհատըմ չես՝ էտ տո՛ւ, էտ կուլեն:

Թաքավորի տղեն կուլիցը խմըմ ա, տենըմ ա՝ ճուր ա, լցնըմ ա ամանը, խմըմ, տառնըմ ա շնրբնթ:

Մնըմ ա չըչկըված, վերչը ասըմ ա. —Հնրբնթ տո՛ւ իմ դըսմնթն ես, որ ճըրի տեղ շնրբնթ ես տալիս, թն դաբուլ ես, քե կըտանեմ պալատ, կըփըսակվեմ քե նհետ:

—Ես իմ կլխի տերը չեմ, ունեմ-չունեմ մին հեր ունեմ, ընդրան եմ պահըմ, թն որ ես կնմ պալատ, կըմնա անդեր:

—Անդեր չի մնալ, քու հերը՝ իմ հերը, ինչ թաքաղութ, հորըտ էլ կըտանենք, մինակ թն տո՛ւ ոազի ինես:

Էտ ախճիկը հնմին խորթ ախճիկն ա ինըմ: Թաքավորի տղեն ախճրկանն էլ, հորն էլ տանըմ ա պալատ, օխտը օր, օխտը քըչեր հըրսանիք են անըմ, դե ով հըրսընքին իլել ա, կուչտ ու կուռ կերել ա, ով էլ իլել չի, ընդրա մհար Ասսանա թող մին խնձոր վեր ընգնի:

